ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Ե. **1870** ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՁԱՊ

Ասերբէյջանի պատմագրաբար՝ Խորհրդական Էմանուէլ յարմարեալ Հայկազեան Ա Սեծի-մասա ոչ յարգալեցին ոչ յարգանաց՝ յերկոս երանելի Պարոնաց Գրիգորիոս Լուսաւորչի Հայոցապան աշխարհին։

(Շարունակութիւն և վերջ)

Ուստի և ասեն, կամեցաւ գնալ ի վերայ ծընկաց Յերուսաղէմ, զի անդ կատարեսցի. և այնպէս իջեալ ի լեռնէն և անցեալ ընդ ձորակ մի՝ առաքէ Տէրն Նորա Քրիստոս, երկու սերովբէս ընդ առաջ Նորա՝ ասել ցնա պատկառանօք. "Ի քո անտանելի ճգնութենէդ, և կաց ի վերայ ոտից քոց, և ել ի լեառնդ՝ ուստի իջերդ, և անդ վախճանեսցիս, և ոչ որ գիտասցէ զմահ քո առ ժամայն, և ոչ առնուն զքեզ ի պաշտօն բարուոք խրատեալ ի քէն ժողովուրդն քոյ"։ Զոր և արարն իսկ, և ի տեղւոջն խաչս կանգնեաց և Սերովբէս անուանեաց. և այժմ գեղակ է տեղին՝ ուր խաչն կայ հրաշագործ, և անուն գեղջն կոչի Սերովբէք մինչև ցայսօր. ստուգապէս և գիտակ են այսմ աւանդութեանս, որ ասացաւս։ Եկ ապա ի լեառնն իմանալի, ի լեառն զգալի ըստ հրամանի Տեառն՝ իւրովքն պատգամաւոր սերովբէիւքն. և անդ իմաստասիրէր՝ որպէս Եղիայ ի Կարմեղոս՝ և կայր խաչեալ անդ զցայգ և զցերեկ։ Իսկ յորժամ լցաւ ի նա ամենայն խորհուրդք և ամենայն տուրքն բարիք և պարգևք կատարեալք ի վերուստ ի նա իջեալ, և եհաս ժամանակ ելից Նորա ի խաչաչարչար և ի բազմատանջ մարմնոյն, և երթեալ առ Տէրն իւր յանասելի փառսն իւր, զոր ամբարեալ էր։ Եւ ի ընուլ թուոյ երեսուն ամաց Քահանայապետութեան Նորա, զբարուոք պատերազմն պատերազմեալ, զհաւատսն պահեալ զընթացսն կատարեալ, և յանթառամ պսակն հասեալ, հանէր ապա հրամանն Տեառն՝ զնա ի կատար լերինն Սկուհ, և ցուցանէր նմա զերկիրն

Աւետեաց՝ զվերինն Երուսաղէմ՝ զանդրանկաց եկեղեցի, որ սպասէին նմա։ Զորօրինակ, մեծն Մովսէս զՊաղեստին տեսանէր 'ի Նաբաւ լեռնէ և վախճանէր։ Այսպէս և մերն Մովսէս յետ վերնային փառաց տեսլեանն՝ տեսանէր և զսահմանս վիճակին իւրոյ, զորս խաչակնքեալ օրհնէր, և յանձն առնէր Աստուծոյ՝ հայրենի աղօթիւք և յորդառատ արտասուօք։ Եւ ապա աւանդէր 'ի ձեռս Աստուծոյ զանարատ հոգին միայն ընդ միոյն Աստուծոյ գոլով. և նշխարք մարմնոյն կարօտ և ծարաւի թողեալ, զբիւրաւոր բանակս ուստերաց և դստերաց իւրոց, և խանդակաթ և կաթոգին զմանկունս առագաստի՝ և զտղայս հոգևոր երկանց իւրոց, որք ոչ լուան զյետին խօսս խրատու նորա առ մխիթարութիւն իւրեանց, և ոչ զարդարեցին զդին նորա, և ոչ լացին զնա զաւուրս երեսուն, որպէս տունն Իսրայէլի զՄովսէս և զՀարօն։ Այլ փոխանակ նոցա՝ սիւն հրեղէն՝ և բանակք հրեշտակաց շուրջ զաստուածընկալ մարմնով նորա, և անպատմելի ուրախութիւն 'ի մէջ դասուց երկնաւորաց՝ շուրջ զմաքուր և զԲրիստոսազեղ հոգւով նորա։ Իսկ զՀովանաւորելն երկնաւոր փառօք զմարմին Հովուին մերոյ, զքաջ ի հովուաց բարեբախտաց գտեալ թաղեցին անգիտաբար. և տեսեալ զնա՝ զի կայր կանգուն յեցեալ 'ի գաւազանն՝ տարածեալ ձեռօք, սակայն իմացան 'ի փառաց լուսոյն՝ թէ մեծ ծառայ Աստուծոյ է։ Զոր եղիտ ապա ճգնաւոր սուրբ Գառնիկ, և տարաւ 'ի Թորթան. և անտի տարաւ Զենոն կայսր 'ի Կոստանդնուպօլիս. և յետոյ բերաւ շնորհօքն Քրիստոսի՝ 'ի Հայս՝ 'ի ձեռն Գրիգորի Պատրկի. որոյ կէսն եղաւ 'ի ներքս չորից սեանցն սուրբ Գրիգորին առ ապարին, և այն յեկեղեցիս և յայլ բաղում տեղիս գանձեցաւ։ Եւ Աջն շնորհակալ և լուսաբաշխ հանդերձ այլ նշխարօք՝ և նորին պատարագամատոյց սեղանովն և գաւազանն կայ յաթոռ սրբութեան իւրոյ՝ յԱստուածապահ դղեակն Հռոմկլայն կոչեցեալ. և ծնանի զաւակս և աղբիւրացուցանէ զշնորհս հոգւոյն ընդ ամենայն Հայաստանեայս։ Քանզի սիւն հրեղէն՝ սարս խաւար թակաղաղ ունելով ահաւոր, որ էր իրրև գլեառն մի լուսեղէն խաչիւ թագաւորեալ, զոր մեկնեաց հրեշտակն 'ի տեսլեանն, եթէ պատիւ Քահանայութեան է այս՝ որ յոյժ բարձր և ահաւոր է խորհրդով, այն ոչ երբէք մեկնեալ 'ի բարձր և յահաւորէ խորհրդով, այն ոչ երբէք է մեկնեալ 'ի բարձր և յԱստուածակառոյց աթոռոյ նորա։ Եւ վասն այնորիկ հաստատեալ կայր անշարժելի խարիսխն ոսկիաձոյլ, յաղագս որոյ անդ է Գրիգոր՝ 'ի յաթոռ իւրական փառօք։ Եւ տարածեալ է անուն նորա ընդ ամենայն տիեզերս Տէրութեան Աստուծոյ. քանզի յամենայն տիեզերս, Երկիր ել բարբառ նորա, և մինչև 'ի տիեզերս հասին խօսք նորա։ Եւ Նշխարք սուրբ ոսկերաց նորա՝ և լրմամբ շնորհի իւրոյ՝ տարեալ էր Գրիգորիոս ընդ ամենայն իւրաշէն եկեղեցիս։ Եւ զրգի զգուանօք անուն նորա 'ի շրթունս ուղղափառ զաւակաց իւրոց, և յամենայն ազգաց Լուսաւորիչ Հայոց կոչեցեալ Գրիգորիոս։ Գրիգորիոս Լուսաւորիչ Հայոց. վասն զի այլոյ ուրուք ազգի առաջնորդի՝ ոչ կայ անուն լուսաւորչի, թէպէտ էին ամենեքեան լուսընկալք՝ և լուսատուք ազգացն՝ զոր հանին 'ի խաւարէ կռապաշտութեանն։ Այլ զի մերն Լուսաւորիչ՝ պարզաբան, յստակախօս, օգտեցուցիչ էր, և մեկնող Աստուածային և երկնաւոր խորհրդոյն, և լոյս ծագէր 'ի բանից նորա, և տայր շնորհս լսողաց։ Լուսաւորիչ կոչեցաւ, որպէս սրբարանն և պայծառախօսն Յովհան Ոսկիբերանն ասացաւ։ Ասեն դարձեալ, թէ երկու ինքնակալքն Կոստանդիանոս և Տրդատէս, և Պապքն երկոքին՝ Գրիգորիոս և Սեղբեստրոս՝ եկին 'ի Հռոմայ յԵրուսաղէմ, և վիճակաւ բաժանեցին զտնօրինական տեղիսն, և Հայոցն անկաւ Սնարքն և Գողգոթայն, և սուրբ Կարապետն և սուրբ Յակոբ. և սուրբն Գրիգոր կանթեղս կախեաց 'ի սնարսն, և խնդրեաց զլիջումն լուսոյն յԱստուծոյ 'ի նշան ժամու Յարութեան իւրոյ՝ ամի ամի 'ի փառս անուան իւրոյ՝ և յիշատակ շնորհաց Հօրն մերոյ սրբոյ, և յաղագս այնորիկ Լուսաւորիչ կոչեցաւ։ Էաք և մեք քան զազգս բաղումս խաւարատանջ, մառախղամածք, յուսակորոյսք, և 'ի ձեռն նորա լուսաւոր վարդապետութեանն քան զյոլովս մեծագոյն շնորհի արժանացաք, իմաստութեամբ և ուղղափառ հաւատով, աննենգ, անբիծ և անարատ խոստովանութեամբ՝ զի առաւել եղեն մեզքն, առաւել եղեն և

յաւելման շնորհքն. յաղագս որոյ մեք լուսաւորեալք, և նմա միշտ Լուսաւորիչ անուանեցաք՝ և անուանեմք։ Ցայտնապէս՝ որպէս արեգակն 'ի մէջ երկնից լոյս անշիջանելի հանապազ վառեալ 'ի նշխարս ոսկերաց իւրոց, և կայ միշտ յաթոռ փառաց իւրոց. ուստի բաշխի և բաժանի յաճախաբար պարգևօք՝ յուղղադաւան ժողովուրդս և 'ի վիճակն սահմանաց իւրոց՝ էացեալ և արմատացեալ մինչև յաւիտեան։ Գրիգորիոս [illegible] կոչեցեալ Թարգմանութեամբ, յարակիր և ներգործական անուամբ. որ ոչ երբէք ետուր քուն աչաց, և ոչ ծանրութիւն արտևանաց, և ոչ հանգիստ գժուարաբեկն մարմնոյդ, մինչև գտեր զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ և տանս Թորգոմայ։ Գրիգորիոս՝ որդի մխիթարութեան ըստ այլում կոչման, ո՛չ մօրն քո Ոգոհեայ, այլ բոլոր Հայաստանեայցս եկեղեցւոյ. ո՛չ որդի վշտաց՝ որպէս Բենիամին մօրն իւրոյ Հռաքելի, և առիթ մահու. և կամ վա՜յ Քարոզթնացն 'ի յառման տապանակին։ Այլ առիթ բերկրանաց և պատճառ կենդանութեան սկնդուկ և ամուլ աշխարհիս, արևելից հիւսիսոյ ըստ Սահակայ և Իսրայէլի՝ ազատածին և պարգևական զաւակացն Սառայի և Ռեբեկայ. յորմէ օրհնեցան ո՛չ սակաւ ազգք և ազինք, և զանմահականն առին զվիճակ։ Գրիգորիոս՝ հիմն հաւատոյ, սիւն եկեղեցւոյ, յարդարիչ Աստուածատուր կրօնից, յարացոյց անպարտ քաղաքավարութեան ըստ Քրիստոսի։ Գրիգորիոս՝ հաստատութիւն երկրի, Նաւաստի ծովու, բարձրութիւն երկնից, արեգակն 'ի մէջ աղօտ երևակ լուսաւորաց։ Գրիգորիոս՝ համանմանունդ հրեշտակաց, համապատիւ վեհիցն երջանկաց, անուանակիր պետութեանց, իշխանակից իշխանութեանց, զօրակից զօրութեանց։ Գրիգորիոս՝ դասակից Սերովբէից, հաղորդակից Քերովբէից, և հանգիստ և աթոռ սրբոյ Երրորդութեանն։ Զորոյ զգութն ողորմութեամբ և մխիթարութեամբ դարձուցես 'ի ժողովուրդս քո, և 'ի վիճակ ժառանգութեան քո, յաղագս Հայաստանեայց, որք աննենգ և անխարդախ պահեն զառ 'ի քէն եղեալ հաւատս՝ չարչարանօք և ճգնութեամբ 'ի պարծանս քեզ յաւուրն Քրիստոսի։ Թէպէտ և 'ի բարեաց գործոց աղքատ գտանիմք՝ և յոյժ ամաչեցեալ, զոր քաւեսցես մաքուր Քահանայապետդ մեր՝ և Աստուածային ծնօղդ, և հայցեսցես ընդ զաւետեաց խոստումն, վերանալ և ելանել յառաջին փառսն և 'ի պայծառութիւն՝ {Թագաւորութեամբ՝ քահանայապետութեամբ} և գործովք արդարութեան 'ի հաճոյսն Աստուծոյ։ Եւ զսակաւ ծաղիկս զայս՝ հաւաքեալ 'ի խօսուն մարգաց՝ ընկա՛լ ի հիւսս պսակի ամենարժան Գլխոյդ, և տուր տեղի խորանի քո՝ {աստիճանաժառանգ} որդւոյ քո՝ խնդրողի բանիս՝ ես և յուսով աշխատողիս իմ, որ ամենեքին եմ անարժան որդիութեան քո և աշակերտութեան։ Բայց միայն 'ի ձեռն Քոյոյ մաղթանաց՝ սպասեմ ողորմութեան Աստուծոյ՝ հասանել խորհրդով տնօրէնութեանն Քրիստոսի՝ և 'ի հեղումն արեան Նորա. որ է օրհնեալ և գոհաբանեալ 'ի փառս Հօր, և 'ի պատիւ ամենասուրբ Հոգւոյն, և 'ի հրեղինաց և 'ի հողեղինաց, 'ի սուրբս իւր յամենայն արարածս, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶԱՔԱՐԻԱՅ ՊԱՏՄԱԳՐԻ

ՍԱՐԿԱՒԱԳԻ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆԱՅ։

Զաքարիա Սարկաւագ Յովհաննավանեցի, որ էր 'ի սերնդոց Ազատացն Վրաց, որոյ և նախնիքը Վանաքեռ գիւղը կը բնակէին, մեր Ազգի մէջ Դաւրիժեցի Առաքել պատմագրէն առջը՝ եօթնևտասներորդ դարու պատմագրաց մէկն է։

Աս իր պատմագրութիւնը երեք հատորի բաժանելով, առաջին և երկրորդ հատորոց պատմութիւնը Շահապասայ օրէն կ'սկսանի և կ'հասցնէ մինչև Հայոց ՌՃԼԶ